ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 31.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 31/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Մակսիմ» ՍՊԸ-ի 15.03.2017թ. ներկայացրած բողոքը և ի լրումն բողոքի՝ 24.03.2017թ. ներկայացված գրությունը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-31/17 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները և ԳԲԽ-31/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 29.03.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **«Մակսիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Մակսիմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 15.03.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

2017թ. մարտի 31-ին «Մակսիմ» ՍՊԸ-ն (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով առգիծ հայտը լրացնելու եղանակով մասնակցել է ՀՀ

պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար՝ գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Ընկերությունը հայտնել է, որ 03.03.2017թ. ժամը 11:00-ին տեղի է ունեցել Ընթացակարգի հայտերի բացման նիստը, որից հետո «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման թիվ 2 արձանագրությամբ Ընկերությանը ծանուցվել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտն ընդունվել է, սակայն http://www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ոչ ընդունելի (հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի):

«Մակսիմ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ 03.03.2017թ. դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել Ընկերության կողմից ներկայացված «ZIP tender» հայտը՝ /էլեկտրոնային կրիչով/:

Կենտրոնը 07.03.2017թ. թիվ 02/03.1/831-17 գրությամբ հայտնել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ին: Վերջինս ուսումնասիրելով խնդիրը՝ տեղեկացրել է, որ Ընթացակարգին «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտի չբացվելը պայմանավորված է եղել համակարգի սխալով (համակարգը սխալ բանալի է գեներացրել):

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.03.2017թ. տեղի ունեցած նիստով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով Ա/Ձ Հ. Մարտիրոսյանին, իսկ 8-րդ, 9-րդ և 10-րդ՝ «Երվադա» ՍՊԸ-ին:

«Մակսիմ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ վերջինիս կողմից ներկայացված Ընթացակարգի հայտը համակարգի կողմից ոչ ընդունելի լինելը պայմանավորված է եղել համակարգի սխալով, ուստի Ընկերության հայտը չքննարկելը անհիմն զրկել է գնումների

գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով մասնակցելու հնարավորությունից:

«Մակսիմ» ՍՊԸ-ն, որպես բողոքի փաստացի և իրավական հիմքեր, նշել է հետևյալը.

1. Ընթացակարգի ընթացքում Ընկերության կողմից ներկայացված հայտը համակարգի կողմից գնահատման համար ոչ ընդունելի համարվելու մեջ «Մակսիմ» ՍՊԸ-ի պաշտոնատար անձանց մեղքը բացակայում է, որովհետև.

1.1. ՀՀ կառավարության 05.12.2013թ. ընունած «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու», ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1904-Ն որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1916-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի»՝

- 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է համակարգի հասկացությունը, ըստ որի՝ «համակարգ՝ www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգ»:
- 4-րդ կետի համաձայն՝ համակարգն ունի տվյալները կոդավորելու և մինչև հայտերի բացման պահն այդ տվյալների ապակոդավորման անհնարինությունն ապահովելու հնարավորություն:

1.2 Ընթացակարգին մասնակցելու ընթացքում Ընկերության կողմից (որպես էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների մասնակից) ՀՀ կառավարության 05.12.2013թ. թիվ 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման մասին» կարգով, ՀՀ ֆինանսների նախարարի 10.01.2014թ. թիվ 7-Ա հրամանով հաստատված «Էլեկտրոնային ձևով իրականավող գնումների կատարման վերաբերյալ ուղեցույցով», ինչպես նաև գնումների էլեկտրոնային համակարգում (ARMEPS) հրապարակված «Տնտեսական օպերատորի օգտվողի ձեռնարկով» պահանջվող կամ կատարման համար պարտադիր բոլոր գործողությունները հստակ և բարեհաջող կատարվել են , ինչը հավաստվում է նաև համակարգը իր կողմից գեներացված, համարակալված և Ընկերությանը ուղարկված ծանուցմամբ:

1.3 Ընկերության կողմից կատարման համար պարադիր բոլոր գործողությունները հստակ և բարեհաջող կատարվելը հաստատվում է նաև «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի ստացված արդեն հիշատակված գրությամբ:

1.4 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

• 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

2. Ընկերությունը ներկայացրած բողոքով նշել է նաև, որ Ընկերության պահանջով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրվել է Ընթացակարգի մյուս մասնակիցների գնային առաջարկների պատճենները, որի համեմատությունից պարզվել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը 1-ից 9-րդ (ընդհանուր 10 չափաբաժին) չափաբաժիններում ցածր է մյուս մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներից, ինչի արդյունքում հնարավոր կլիներ բյուջեի միջոցներից տնտեսել զգալի գումար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 2-րդ կետը և 4-րդ կետը դադարեցնելու պահանջների մասին:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգը և վերականգնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով «Մակսիմ» ՍՊԸ-ին վերապահված իրավունքները:

«Մակսիմ» ՍՊԸ-ն, ի լրումն 15.03.2017թ. ներկայացրած բողոքի, 24.03.2017թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

2017թ. մարտի 31-ին «Մակսիմ» ՍՊԸ-ն (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով առգիծ հայտը լրացնելու եղանակով մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:

Ընկերությունը հայտնել է, որ 03.03.2017թ. ժամը 11:00-ին տեղի է ունեցել Ընթացակարգի հայտերի բացման նիստը, որից հետո «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման թիվ 2 արձանագրությամբ Ընկերությանը ծանուցվել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտն ընդունվել է, սակայն http://www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ոչ ընդունելի (հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի):

«Մակսիմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ 03.03.2017թ. դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել Ընկերության կողմից ներկայացված «ZIP tender» հայտը՝ /էլեկտրոնային կրիչով/:

Կենտրոնը 07.03.2017թ. թիվ 02/03.1/831-17 գրությամբ հայտնել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է համակարգի

տեխնիկական սպասարկումն իրականացնող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ին: Վերջինս ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ Ընթացակարգին «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտի չբացվելը պայմանավորված է եղել համակարգի սխալով (համակարգը սխալ բանալի է գեներացրել), ուստի Ընկերության կողմից ներկայացված հայտը Համակարգի կողմից՝ գնահատման համար ոչ ընդունելի համարվելու մեջ Ընկերության աշխատակիցների մեղքը բացակայում է:

Հաշվի առնելով վերոգրյալը, Ընկերությունը գտնում է, որ վերջինիս հայտը չքննարկելը անհիմն զրկում է գնումների գործընթացին միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով մասնակցելու հնարավորությունից և խախտում է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով գնումների գործընթացի մասնակիցներին վերապահված իրավունքները և օրինական շահերը: Ինչպես նաև չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ և առաջացնում է գնման գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Ընկերությունը խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը (դադարեցնել Ընթացակարգը):

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Կենտրոնը 16.03.2017թ. թիվ 02/04.1/978-17 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությանը խնդրել է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն 25.03.2017թ. թիվ ԴՎԱ/784 գրությամբ ներկայացրել է Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և հայտնել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ ARMEPS էլեկտրոնային

գնումների համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել այն բացելու և գնահատելու համար:

3. ԳԲԽ-31/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 29.03.2017թ. եզրակացությունը և առաջարկել է «Մակսիմ» ՍՊԸ-ի 15.03.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ընթացակարգ հայտարերելու մասին 22.02.2017թ. թիվ 1 որոշումը:

4. ԳԲԽ-31/17 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-31/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտը

www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար անընդունելի (հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի):

4. «Մակսիմ» ՍՊԸ-ն 03.03.2017թ. դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել Ընկերության կողմից ներկայացված «ZIP tender» հայտը՝ /էլեկտրոնային կրիչով/:

5. Կենտրոնը 07.03.2017թ. թիվ 02/03.1/831-17 գրությամբ հայտնել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ին: Վերջինս ուսումնասիրելով խնդիրը՝ տեղեկացրել է, որ Ընթացակարգին «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտի չբացվելը պայմանավորված է եղել համակարգի սխալով (համակարգը սխալ բանալի է գեներացրել):

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Մակսիմ» ՍՊԸ-ի 15.03.2017թ. ներկայացրած բողոքը, ի լրումն բողոքի՝ 24.03.2017թ. ներկայացված գրությունը, Կենտրոնի 07.03.2017թ. թիվ 02/03.1/831-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.03.2017թ. թիվ ԴՎԱ/784 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

• 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտը www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար անընդունելի (հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի):

«Մակսիմ» ՍՊԸ-ն 03.03.2017թ. դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել Ընկերության կողմից ներկայացված «ZIP tender» հայտը՝ /էլեկտրոնային կրիչով/:

Կենտրոնը, ի պատասխան «Մակսիմ» ՍՊԸ-ի վերը նշված գրության, 07.03.2017թ. թիվ 02/03.1/831-17 գրությամբ հայտնել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ին: Վերջինս ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ ***Ընթացակարգին «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտի չբացվելը պայմանավորված է եղել համակարգի սխալով (համակարգը սխալ բանալի է գեներացրել):***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպություն հանդիսացող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ի պատասխանի համաձայն՝ ***«Մակսիմ» ՍՊԸ-ի հայտի չբացվելը պայմանավորված է եղել համակարգի սխալով (համակարգը սխալ բանալի է գեներացրել),*** ուստի Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում «Մակսիմ» ՍՊԸ-ի գնման գործընթացին մասնակցելու իրավունքը (տվյալ դեպքում հայտ ներկայացնելու իրավունքը) սահմանափակված է եղել և Ընկերությունը օբյեկտիվորեն զրկվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու իրավունքից, ինչը հանգեցրել է Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների խախտմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մակսիմ» ՍՊԸ-ի 15.03.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Ընթացակարգ հայտարերելու մասին 22.02.2017թ. թիվ 1 որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամ՝ **Սոնա Շիրինյան**